

Ա Ր Ե Ի Մ Ո Ի Տ Ք

ԱՐՁԱԳԱՆԳ ԵՐԱՊԱՅԻ ԼՈՒԾԱՌՈՐՈՒԹՅԱՆ.

Ա. Տարի. Թիս. 28. Հրատարակի ամիսը եւիսը անգամ. հաւելանք ամիսը Ժուլիէ: Գործարար. — Քարիլ, Արցախ Գեորգիյեան, 23, Քաւովի Բուլուար. 1899 Նոյեմբեր 2.
— Պայիս, Արցախ Թ. Մելիքեան. — Իզմիլ, Արցախ Արիստակէս. — Եկիպոս, Արցախ Տէր Գաւաթեան եղբայր:

ԱՁԴ.

Պ. Ս. Ասկանեանը, տաս ամիս Արեւմտաֆր ձրի շարագրելէ ետեւ, կը հրաւարի իր պաշտօնէ գործածն առեր էր որոշ Թեւոթիսով: Անշուշտ այս շախտի արգիլէ Պօրի տեւան մը Հայերը տախտին նոր ստուծինն և գրադարտութիւն հնարել, բարդել զանոնք և սակցընել Թէ. « Իրեն գրաւատիւն նպատակէր եղան. » ինչպէս իր անարդարութիւնը չ'արգիլեց որ վատաւիւն զինքը թողուն և բացերն Արեւմտ ֆր հերքեն: Մեր բարեկամին նկրելի է ամեն պատիւով անարգէր թողուլ, ի զուր ան տաս ամիս պատիւէն և տոբը իր Թշնամիներուն՝ սրբ գեւ. մումի մէջ կը խլրտին և չեն գիտեր իր զոհիկներու կոխարար զըրգոել յնդմուծինն պատար. համար: Կոնիկեան և Շաննագորեան, Ալվագովսքի և Ամրապիտս պարտնները պիտի խախն Էրբ մուստաի պիտի ըլլան որ նի պատախանն տանելու չեն: Այս արիւնքիւնը Պօրի մէջ միայն կը տանուի.

Պ. Ս. Ասկանեանը կ'աղերսէ, որ Արեւմտաֆր համարտարութիւնը պատենք քանի մը տունն ևս: Փառք կը սեպենք, մենք՝ ինչպէս իր բոլոր օտարազգի բարեկամները, այս Թեւեւ ծառայութիւնը Հայերուն ընել իրեն համար: Կը հրաւիրենք ուրեմն Արեւմտաֆր նիմնադիրները յաջող մը բնտուէ մեզ:

ՅԱՆՈՍ ՏԵԼԵԴԻԷ.

(Ի Բըզիս Զրոյսեպէ.)

Մարիտի մէջ ապիլ, սկսէր են Թախտախանն Հրեայ միպատանութիւնը որուն շտապարունը հաս կը պնենք:

« Մեր պատուելի հայրենակիցը շտապարունով աղեւտաւիւն հեղինակներ իսկ ի սրտէ հշմարտաւեր և ցատկացանէն խոսքերը, Աղդի անուստմաւորութեան և ոնգրատիրութեան մասին, միտարարում են, յայց տալով իրենանց ինչպէս երկում է, արգարացի օրտաւտները, առաջին, Թէ նոյն գրաւմները ճիշ և մեւալ լեզուով լինելով, անմոտենալի էին ուղղին. Երկրորդ, Թէ մեծ մասով գրաւմքը լինում են իրիւտարտաւիւն կամ նեախրաւիւն խնդիրներ լիւր, որ ժամանակի օրպիտութիւնը անարմար լինելով, չեն զարհեցնում Աղդի նոյն մէջ ետանդ դէպ ի զրախրութիւն. վասն որայ և միւս են՝ սորո և նորո տունը ընկած տունց անգամ և բացվելու, կամ, բանի մի ճիշ լեզու խնայողներ ձեռքում:

Այդ խոսքերի վերայ, ինձ քաղցր եղաւ գոյա տալ Եւթեն Սիս Պարանի « Թախտախանն Հրեայ » անունով միպատանութեան հոյ Թարմանութիւնը այն լեզուով, որ ժողովրդին հասկանալի էր: Եւթէ փորձով երեկ, որ ժողովրդի գանգատին ալտան է իրաւունք տալ, ինարկէ մեր պատուելի հեղինակը իւրենանց ընծացը կը յորմարեն ժամանակի օրպիտութեանը, և կ'աշխատին աղեւտի լանելով պարտաւերացանել ընծարցաները, որ և հասկանալի լինէին նոյն և տղրեցուծին ունեւալին նոյն հոգեպէն զարգացման վերայ. իսկ Եւթ Աղգայիներ այդ խոսքերը բերանն աւել են միտն այն մտքով, որ բամբաւեն հեղինակներ որդարարանութիւնը և գրաւմով ծածկեն իւրենանց անուստմաւորութեան մեկը, ոյն ժամանակ ալ ևս յայտնի կը լինի և կը հասկանցնէ բանի զօրութիւնը: Այս խոսքերը ևս առում են ընդանրապէս. իսկ, իմ կարծիքով, մինչև մէջ տեւաւմը չ'կային զարդանք, հաւարախրութիւններ, և այլ շտապարագանք, որ կարծի էին Աղդի նոյն մէջ բոստացանել և զարգացնել բոստարութեանն սերմը, մինչև օրինաւոր զօրմիջ չ'կար խոսրանացան երկիրը վարելու և հերկելու, որոյ տեղը սերմ ցանել չոր ու մայաւտա երկրի վերայ, կամ օտարաւմներ և անապոյրի վերայ, օղաւ ամենեւին անեկալու չէր:

Այն ազգը, որ չունէր զարդանք, աստմաւիւն ըն-

կերութիւններ, զանազան լուսաւոր զաւարտարներով հարուստ շարունակ օրագրութիւններ, այն Ազգը, որի համար ուսումը և գիտութիւնը մի երկրորդական երրորդական բան էր, որ իր հոգու բոլոր զօրութիւնը լարել և տրամադրել էր միայն նիւթական բաների համար, նորան ինչ կը ներգործէ երկու տարին մի անգամ կամ տարին մի անգամ մի գրքի աշխարհ յայտնվիլը. և խեղճ հեղինակը տարիներով չարչարվում է մինչև իւր աշխատութիւնը զլուխ կը բերէ, բայց այդ աշխատութիւնը Ազգին մի բանի տեղ անց կը կենաց, գինէ, մինչև այժմ չէ երևում դորա մի դրական անպայայցը :

Բանը այս տեղ հասած լինելով, հարկաւոր էր հեղինակներին մի հնար գտանել ժողովրդի սիրտը մի կերպով ջերմացնելու, մի կերպով զարթեցնելու նորա մէջ այն ազնիւ եռանդը լուսաւորութեան, որ մարդկութեան պարծանքն էր. ուրեմն, նախ պիտոյ էր այն լեզուով խօսել որ ժողովրդի ականջը ներգործէր սրտի վերայ և այն տալաւորութիւնը, որ լսողութիւնը ստանում էր, բացարձակէր սրտի վերայ : Այս, գիտակցութեամբ և հասկացողութեամբ կը լինի. եթէ մէք լսելինք մի անհասկանալի բառ, մեր համար մի և նոյն էր լսել մի ծաբուկի ձայն. այսպիսի ձայները լսողութեան վերայ ներգործելուց առաւել, այլ ազդեցութիւն չ'ունին : Այս պատճառով ժողովրդի սրտի վերայ ներգործելու համար, պիտոյ է այնպիսի ձայնով ներգործել նորա լսողութեան վերայ, որ գիտակացութիւնը, ըմբռնելով այս ձայնի խորհուրդը և տալաւորութիւնը, անմիջապէս հասուցանէ նորա սրտին. և հեղինակը պարտական է գործ ունենալ ժողովրդի սրտի և հոգու հետ, և ոչ նորա ականջի հետ որ ինքն ըստ ինքեան առաջնորդ էր մի միայն արտաքին աշխարհի տալաւորութիւններին, սրտի և հոգու մէջ մտանելու : Երկրորդ՝ մի այնպիսի ժողովրդի, ինչպէս մեր հայոցն է, նայելով նորա այժմեան վիճակին, պիտոյ է ընդհանուր և հասարակ կրթութիւն, որպէս պատրաստողական հնար դէս ի առաւել բարձր և հիմնաւոր կրթութիւն, և ոչ բարձր և վերին կրթութիւն մի որպիսի և իցէ մասնաւոր առարկայի կամ լաւ ասել ուսման հիւղի : Այժմեան դրութեան մէջ Հայոց ազգը կարող է հասանել բարձր կամ վերին կրթութեան մասնաւոր առարկայի մէջ, միայն այն ժամանակ, եթէ այդ առարկայն, այդ ուսման հիւղը, հնար էր նորա նիւթական բարեկենդանութեանը :

Այս պատճառներն հիման վերայ, հեղինակի գրելիքը առաջինը պիտոյ է լինելին նոր հայախօսութեամբ, երկրորդ, հեղինակութեանը պիտոյ է վերաբերվել ընդհանուր կրթութեան, և այնպէս, որ առանց նախընթաց կարօտութեան օրինաւոր դպրոցների և Համալսարանի, հասկանալի լինէր ընթերցողներին և մի և նոյն ժա-

մանակը գրաւող և դաստիարակող ընդհանրապէս :

Շատ օրինակներ ունինք մեր աչքի առաջ, որ մեծամեծ աշխատութիւնք, այն, քրտինքով զլուխ բերած, Ազգին ամենեւին օգուտ չէն բերել, ինչպէս են բարձրագոյն ուսումներն հրահանգութիւնք. յանկարծ, մինչ ոչ Գալոցներ, ոչ ձեմարան և ոչ Համալսարան ունէինք, Թարգմանել և տպել « Ուսումն նաւուզու-թեան » այս ասելով միտք չ'ունիմ միայն այս գործը պատարակել կամ սորա անտեղի լինելը յայտնել, այլ այսպէս շատերը կան, և ոչ միայն շատ կան, կարելի է ասել, Թէ մեր մատենագրութեան մեծ մասը, այսպիսի բաներից է բաղկացած : Ո՞վ է դոցա կարգացող և հասկացողը, և ուր է այդ գրքերի հանդէսը : Այն, եթէ ունեցել էինք պատշաճաւոր ուսումնարաններ, եթէ զիտութեան սանդուղքի համար ունեցել էինք մի ամուր քարից պատուանդան, որի վրայ աներկիւղ կարելի էր սանդուղքը ամրացնել, այն ժամանակ կարելի էր և աւելի վեր բարձրանալ. խալ մէք ոչ եթէ օրինաւոր պատուանդան, այլ և առանց մի ոտք կոխելու տեղ ունենալու, կամենում ենք օղի վերայ սանդուղք ամրացնել և նորա վերայով բարձրանալ : Այդպիսի բաներ երազում միայն կարող են կատարվիլ, խալ արթնութեան մէջ, ոչ երբէք :

Բանի որ մեր մատենագրական գործունէութիւնը փակված է այն նեղսիրտ և դարաւոր հնութեան սահմանի մէջ, քանի որ տասն և ինն դարու հեղինակը չորրորդ և հինգերորդ դարու լեզուով խօսելով, ստիպում են ժողովրդին ևս մոռանալ ԺԹ երորդ դարը, մոռանալ շրջապատող հանգամանքները և յետ գնալ հեռանալ մինչև Ն դարը, ևս իմ կողմից կարելի է մեղանշում եմ... կատարեալ իրաւունք կըտամ ժողովրդի անգրասիրութեանը. պատճառ, Թէ և հեղինակները ինքեանք գրելու ժամանակ վերանում են մինչև Ն դարը, բայց ժողովուրդը չէ կարող նոյնպէս գնալ Ն դարը, մեր պատուելի ԺԹ երորդ դարու հեղինակութիւնքը կարդալու : Նա պինդ կատար է ժամանակի շղթաներով. ժամանակը վաղում է յառաջ. ուրեմն և ժողովուրդը պիտոյ է վաղէ. այս տեղ նա միջոց չ'ունի, Թէ և ցանկանար, յետ դառնալ այնքան հեռի, տասն և չորս դարու ճանապարհ. ժողովուրդը ուղեկից է ժամանակին և մնացել է և մնում է նորա ազդեցութեան տակ. պատուելի հեղինակները բացաւորութիւն կամե-նալով լինել հասարակաց օրէնքից մնացել են և այժմ ևս ամենայն ջանք գործ են դնում մնալ Ն երորդ դարում և ամենին ցած չգալ այս դարուցը, ուրեմն ինչպէս պիտոյ է սոքա միմեանց հասկանան : Զգիտեմ թի՛չ գերբնական դրութիւն է հարկաւոր, որ տասն և չորս դարու խորոցը, որ այնքան մեծամարմին ընկած էր Ն և ԺԹ դարերի մէջ, ճեղքէր և հասանէր ժողովրդին :

Տեղիք չ'ունինք ամենեւին մեր ժողովրդի անգրասի-

նստած էի, որն որ հաւաքիչ բնասողի մը ամենեւին յարմար է՛ր, ինչու որ համարու վրայ տունկ վրցընելու ժամանակս չէր ուղեր կենալ, և ինծի մեծ տաժանմունք կուտար աս կրակոտ կենդանին՝ երբոր առանց Խաղախիս օգնութեանը նորէն հեծնել կ'ուզէի: Թէպէտ հոստեղաց ձիերուն ցեղը շատ գերազանց, ընծայքնին թեթև, և ջարժմունքնին սիրուն ու հաճոյական է, այսու ամենայնիւ շատ հեղ կը նդովէի դանոնք իրենց հրային արեան համար, և Բերբերիայի հեղ ու համբերող ձիերուն, նաև գրեթէ Խաղախներու դանդաղ զբառներուն ալ կը բաղձայի, որոնք թէպէտ հետո ու անաստ խառնուածք ունին, բայց սովորաբար ննադանդելու կըրթուած են, դորոնք մարդ աւելի դիւրաւ կրնայ կեցընել, քան թէ աս լեռնաստանին սէզ ու խրովստ և քաջազգի ձիանքը, որոնց միշտ ճշմարիտ ուրախութիւն մը կը բերէ՝ սար ու ձոր վազելն ու արշաւելը:

Առաջին մեծ գեղն, ուր որ նոյն օրը հասանք, Աշտարակ կ'ըսուի, և Հայոց հիմակուան մեծապատիւ ու ձերունի Ներսէս կաթողիկոսին ծննդեան գեղն է. ինք, ինչպէս նաև իր նախորդներուն մէկ քանին աղքատ գեղացիներու դասակ էին: Աշտարակ, աղւոր, Էրեւելի և քրիստոնէաբնակ գեղ մըն է, որուն բոլորտէրը շատ սղարտէղներ կան: Այս գեղին շրջը հարաւային Արագածունի վրայ այնչափ բարձր չ'ըլլալով՝ շատ բարեխառն օդաբաժին, բերրի երկիր և առատ ջուր ունի, և ամէն կերպ ցորենեղէն, պտուղ ու խաղող կը բուսցընէ: Պր. Արովեանին մէկ հին հայազգի բարեկամը՝ Ստեփան աղա, դմեղ հոս հիւրընկալեց և ամեն տեսակ կաթնեղէն ու հաւկթեղէն ազնիւ կերակուրներով դմեղ պատուեց: Գեղին բնակիչները չափաւոր բարեկեցիկ են և իրենց վիճակին վրայ գոհ: Աւելի բարձր գեղերուն մէջ Երկրին պողաքերումիւնը կ'սկսի սկսիլ, և ժողովրդեան բնակութիւնն ու կեանքը կը ցուցնէ թէ երթալով աւելի ևս աղքատ են և հացապակառ:

Արագած Հայաստանին մէկալ լեռներէն գրեթէ բոլորովին դատուած և ինքնագլուխ լեռանց խումբ մըն է, չորս գլխաւոր կոնաձև կատար ունի, և իրեն կերպաբանքը՝ ունեցած հովիտներուն ու դարատափներուն շատութեամբը Մասիսէն շատ կը տարբերի:

Մարդ իբրև թէ աստիճան աստիճան անոր դարատափները կ'ելլէ, մինչդեռ որ ամենէն մեծը հասնի, որն որ ջրեղ լեռանդաշտ մըն է, և Փարիզի 6,400 ոտնաչափի մօտ ծովին Էրեւէն վեր կը բարձրանայ, որով նաև Վարնոյ լեռնադաշտէն ալ բարձրագոյն է: Արագածին չորս կատարներուն վրայ ալ տանի լեռնադաշտեր կան թէ արևմտեան և թէ հարաւային կողմանէ: Հոս ամեն զի հրաբխային ասպուտմները շատ աւելի վիսրած ու հող դարձած են քան թէ Արարատի վրայ, և գետինն ալ աւելի բուսաւէտ ու արգաւանդ է:

Աս Էրեւտին պատճառը ոչ Արագածի ժայռերուն տեսակէն և ոչ ալ անոնց աւելի հնութենէն է, այլ աղբիւրներու առատութենէն ու դարատափներու և լեռնահովիտներու շատութենէն, որոնց վրայ հալած ձիւներուն, անձրեւին և աղբիւրներուն ջուրը կը ժողվի, և լուծիչ օդին հետ միանալով գետնին վրայ աւելի կ'աղղէ: Տիպուտ, որ Արագածի վրայ էլած է՛, սխալանօք կը պատմէ թէ ասոր վրայ ալ Արարատի պէս ջրի պակսութիւն կայ: Բայց անոր հակառակ Արագած՝ աղբիւրներու կողմանէ այնչափ հարուստ է, որչափ որ Մասիսու Էրկու լեռներն աղքատ են, թէպէտ աս աղբիւրներուն մեծ մասը Յարեկուան աղբիւր են, որոնք միայն հալած ձիւներէն կը սնանին, բայց այնպէս որ ջուրը լեռան ծակոտ քարերուն մէջէն վար կ'իջնայ, կը դափ ու կը ժողվի, և դարատափներու վրայ կ'սկսի ցայտելով դուրս բխել:

Արագածի կողմերը ծածկող սև ու ջրաբքի հողին վրայ աս ամառուան ատեն սրանչելի գեղեցկութեամբ ծաղիկներ կը բուսնին: Ասոնց մէջ դեղին գոյնը, ինչպէս հրանունին է, խիստ շատ էր, տեղ տեղ կար նաև լեռնային պերճ ու շառագոյն կակաչներ, բոգ (gentiana) զանգակիկ (campanula) և լուրջ շուշան (iris) կերպ կերպ կատոյտ երանգներով: Արագածի վրայ աս Ալպեան բոյսերը մայիսի վերջերը կ'սկսին ծաղկիլ, և սեղանմանքի ետքերը ձիւնով ծածկուած կ'ըլլան: Սեռնայ ծովին բոլորտիքը գտած ճճիներուս մեծ մասը հոս դարձեալ տեսայ: Արագածի վրայ ժողված միջատներուս մէջ ամենէն Էրեւելին էր գեղումիկ (callisthènes) ըստածը, որն որ միայն Հայաստան կը գտնուի, կատոյտ փայլուն գոյն և արտաքոյ կարգի ձև մ'ունի, շատ բարձր տեղուանք և հասարակօրէն մշտնջենաւոր ձեան բովերը կ'ապրի, ու կ'երեսայ թէ 4000 ոտնաչափէն վար չ'իջնար:

Հայոց Պաղարձուկ գեղն օր մը կեցայ, որպէս զի ասկից Արագած լեռան հարաւային արևմտեան կատարն ելլեմ, որն որ մեծ դարատափին վրայ իբրև ծայր մը ցցուած է: Ֆէստորով՝ որն որ աս կատարին բարձրութիւնը Երասխի դաշտին վրայէն եռանկիւնաչափօրէն չափեց՝ 12,766 ոտնաչափ կը դնէ: Քարթուն՝ որ Ռուսի ծառայութեան մէջ բովոյց պաշտօնատէր էր, Սխուրեան գետին կողմը դարձած կատարին վրայ ամբողջ մնացած հրաբխի բերան մը գտաւ, որն որ 35—40 ոտնաչափ երկախտոր ունէր: Անահագին սև մարմորի շառեւ, որ Արագածին ստորոտը կը գտնուի, աս հրաբխի բերնէն վաղած կ'երեւայ: Հոս ցինդ նշանաւոր երկրաբանական դէպքերէն մէկը զիտեց Քարթուն, այսինքն հրաբխային արատոյ ապաւանմին մէջ ամբաւ հատաքար (granit) տեսաւ, որն որ առջինէն յառաջ զոյացած ըլլալով՝ կ'երեսայ թէ արատոյ ապաւանմը հրաբխային զօրութեամբ վեր

նելէս ետքը, ինչու որ ամենք ասանկ օտարական հիւր մը մէջէն ինքն տեսնելով՝ ի սկզբան կարծեցին, որ Ռուս պաշտօնատէր մըն էմ, սակայն իրենց հետ յաճախ ընտանեկան կենակցելովս՝ առաջին վախն ու բնական անվստահութիւնը կորսնցուցին ու բացուեցան։ Աս բարի մարդիկներն իրենց լեռնական առանձնութեան մէջ Երասխայ Փառարներուն պէս չ'էին գիտեր որ աշխարհքիս վրայ Նեմցի ազգ ու երկիր կայ։ Ինչպէս կ'երեւայ, Տրապիզոնէն անդին Նեմցեալիս և ոչ անունը կը լսուի։ Խաչակրաց ատեն գերմանացուց կայսերներուն Փոքր Ասիայի մէջ գործածները, Եզրինէսս դժբաղեան յաղթութիւնները գրեթէ անհետ ու անյիշատակ հղած են։ Սակայն զիս աւելի ան դարմացուց որ Աբազաճի Հայերն և ոչ Անգլիկոսներն անունը գիտէին, որոնց համբաւը հիմայ բոլոր արեւելք բռնած է։ Այս գեղացիները միայն Ռուսը, Տաճիկն ու Պարսիկը կը կարծէին որ ինքնազուտ տէրութիւններ են։ Չամայի որ ատենց սխալը շխտեմ, որն որ ինծի շատ դժուար էղաւ։ Պր. Արտիկոնին բերնով Երոպայի տէրութեանց վրայ երկայն բարակ ստորագրութիւն մ'ըրի, և շատ հգնեցայ որ իրենց գաղափար մը տամ Գերմանիայի գեղեցկութեան, Երկրագործութեան ծաղկեալ վիճակին, բարաքներուն փառաւորութեան ու ասոնց նման բաներուն վրայ։ Բայց այսչափ խօսքերէս ետք՝ դժկամակութեամբ նոյնը լսեցի, զորն որ Երասխայ քովի Պարսիկ խանն ալ ըսած էր. « Ա՛յ դու, եթէ բու տեղդ այդչափ գեղեցիկ է, եթէ հոն անանկ երջանկութեամբ կ'ապրի մարդ, բու հայրենիքդ ինչո՞ւ չես մնար, ինչո՞ւ մեղի կուգաս, ինչ բան դրեղ կը հրախրէ աս մեր անապատը, աս աղքատութեան ու կարօտութեան երկիրը։ »

Պաղարհուկի բնակչաց Երոպայի վրայ գաղափար չ'ունենալուն համար աւելի ևս դարմացայ, երբ Հայազգի երիտասարդ մը տեսայ, որն որ ժամանակաւ Պասկելի իշխանին արեւելեան թիկնապահներուն մէջն է գտնուեր, և իր փառաւոր բայց հինցած նշանազետեալ զէն կը հագնէր։ Ասիկայ նոյն խումբին մէջ երկու տարի ծառայեր է, Վարշաւի մէջ Երոպական կեանք տեսեր է, և իր հայրենակիցներուն ալ շատ բան կը պատմէ եղեր, սակայն՝ ինչպէս ձեր մը դրուցեց, լսողներն ամենեւին չեն հաւատար ու վրան կը ծիծաղին եղեր։ Ասոր պատճառն ան էր որ աս երիտասարդը զինուորական ծառայութենէ զարժած ատեն՝ մէկ քանի Երոպական մոլորութիւններ ու թուլութիւններ ալ հետն է բերեր, որով բոլոր համարումը կորսնցուցեր է, և ինչ որ կ'ըսէ նէ, սուտ ու մեծաբանութիւն կը սեպեն եղեր. ուր որ եթէ աղէկ ու ըստ պատշաճի վարմունք ունենար, բոլոր գեղին մէջ ինք կ'ըլլար հրամայող։ Ես ասոր հարցոյցի թէ Վարշաւ չէ նէ Աբազաճ աւելի կը սիրէ, ինք անկեղծութեամբ պատասխան տուաւ թէ.

« Մարդ հայրենեաց մէջ աւելի յօժարութեամբ կը կենայ քան թէ օտար երկրի մէջ. ստոյգ է որ ապրուստս ու հագուստս այնպէս աղէկ ու փառաւոր չ'են, բայց հոգ ալ չ'ունիմ հրացանս փայլեցնելու և թիկնոցս մարելու. կանչող թմբուկին ձայնը չեմ լսեր, և ձեռք ալ վախ չ'ունիմ, երբոր իմ տնակս ուշ կուգամ։ »

Մ. ՎԱԿՆԵՐ :

Տեսարան Հանյիսիցն Հայկոյ, Արսւնայ և Արայի անուն զիրք մը տեսանք որ Յովհան Վանանդէցի բանահիւսին աշխատութիւնն է։ Անա քանի մը էջ օրինակ իր ընարին։

« Ահա պանծալի պըսակ պէտական
Ի զըլուխ երկիրն առնու Հայտատան .
Զի դարձըն Հայկոյ շըբով յաղթութեան,
Հաստէ տէրութիւն միապետական :
Նահանգըն Հարբայ բընակ նախնական ,
Ակամբը Եփրատայ դուարն զարատան .
Ուր աստուածատունը զըրախան Նգմեան ,
Վարսագեղ փոյլէր յանման ծառատան :
Լերինք իւր իբրու թագ արքայական ,
Ահնազարդ պըճնեալ բերովը բաղմաղան .
Մշտահոս աղբերց ջուրբըն քաղցրահամ ,
Գետահետ առուօր ուղիւնալ յարաժամ :
Որովը յարգասիս բարեաց բեղմնական ,
Ճոխ փարթամանայ աչգի լ' անդատան .
Պարգեր Գեմետրի յաննեղ տուչութեան ,
Զընաղ բոլորն ըղտուրոյն շըբան :
Անդ պըտուղը համեղը յախթօճ հաշակման ,
Բզկենաց պըտղոյն աղղեն ի բերան .
Անդ երկնատեղաց գաղաթին մաքնայն ,
Ի տերես տընկոց ցօղեալ քաղցրաման :
Անդ կոկոռ երփնեալ ծովային ջուշան ,
Անուշակ փայլէ ի գեղ աննըման .
Անդ երփնին մարմանդը ի փողփող ծաղկան ,
Անդ դաշտը բուսաբերը դուարն տեսարան :
Արդ զայս բարգաւաճ աշխարհին սահման ,
Իւր ընտրեաց բընակ Հայկ զիւցաղնական .
Ուր միապետեալ հոգեով բարութեան .
Ելից բաղմութեամբ հրահանգեալ մարդկան :
Ո՞ր կողմանք երկրի, ո՞ր վայրաց կայան ,
Ի բաղդատ գայցէ ընդ Տարուբերան .
Թէ անդ ըղձըրախտ տեղին փափկութեան
Ընտրեաց զետեղել կամքն արարչական :

Ի գործըս կրուող ցոյցըն վայելին
Այլուստ է պատահ զարմ օտարածին
Տեսակի մարդկան ժանտախտ մահակին
Զոր Կայէն երէր յաւերս աշխարհին :

Ի հանդէս մարտի Հայկ հայր ազգային
Թէպէտ և անդոյց կենսախող Բէլին,
Այլ ի բարիքս իւրում կարուածին
Զարհետըն խաղաղ վայլէր Դեմետրին :

Բոլոր անգատտանք յախօս արօրին
Ոսկեփունջ հասկօք զեղեալք ի զաւտին .
Պըտղարեր տընկոյց զեղ զարմանազին
Պայծառ նըկարէր զԴրախտըն յԱզին :

Անգեալք և ոչխարք ի մարգարօտին
Առոյք կայծէին ի բառաչ խընդին .
Գառանցըն խայտալ առ մարցն ի ըստին
Բզմալլ անմեղուկ ցընդէր ընդ կաթին :

Հովուացըն սըրինգ յօղ լիալուսին
Բզմեղր մեղեղեաց զեղոյր ի յունկին .
Սուլումըն հեղիկ անդ գառնարածին
Տըպէր ի շըրթունս զանոյշսըն տալին :

Որ ինչ ի կենաց հանգիստըն գային,
Չէին ինչ պակաս ի Հայկայ յարկին
Իսկ որ զեղխանք էր արտաբոյ կարգին
Չունէին տեղի յայն պարկեշտ շինին :

Ասկղեպեայցըն պէտք առ զարման ախալին,
Մըտանէլ չիշխէր ի տուն Թրքօմին .
Տագնապի և արգ յաշէտս իւր սըրտին
Յորդոցըն Հայկայ մերձեալ անդըստին :

Աւելորդ զարդօց նըշմար բընտին
Տարազիր զընէր յայն մարգէ երկրին .
Չափաւորութիւն Նեմեսեան կըշտին
Հաստատուն պահիւր ի Հաբըայ տեղին :

Իսկ ի վարժ մանկոյն ծաղկանցն ազգային
Խընամք անհրաժեշտ ի Հայկ վայլէին .
Զոմանս ըստ մասին պաշտակեալ ինքնին,
Զայլս՝ ի ձեռն ալոյց կըրթէր ի բարին :

« Սիրտ անրիժ, ասէր, ամբարեւ յոգին .
Զուտ հշմարտութիւն ի զարդըս լեզուին .
Համեմատ խոկման խորհըրդոց ներքին
Յայտնիչ կցորդեալ ըզձայն արտաքին :

Ո՛չ թիւրեւ ըղկամս ի ծարմ հասակին .
Ո՛չ մեղկըս վարիւ ընդ իւր համազգին .
Սէր սեպհականէլ անկեղծ զՈվրէստին,
Անքակ բարեկամ ի վըտանգ վերջին :

Ի սէր հայրենեաց աշխոյժ շերմազին
Վըստահ խիղախումն ի պիտոյս հարկին,
Ակնածս ի ծնօղս յառիժս արեւին
Անշէջ ի հոգւոյն վառել հըրազին :

Չափով սէր պահել և առ թշնամին .
Հաշտ հընարաւոր ընդ ամենեւին .

Մի գաղանանալ յառսըն վրիժին,

Մի արտաբըս գոլ մարդկան օրինին :

Իսկ ի խաղ պարկեշտ յանաւտուկանէին

Դիւրաշարժ կրթել զանգամանք մարմնին ,

Պարսալ անձանձիր ըստանալ յանձին

Կաղզուրեալ զոգիս ի ջիւս յերակին :

ՅՈՎՀԱՆ ՎԱՆԱՆԴԵՅԻ.

(Պիտի շարունակուի.)

Ա.ԶԴ.

Կը փութանք ազգ ամենէլ հասարակութեան որ Արեւ-
մուտքին Պօլսի գործակալութիւնը յանձնուեցաւ մե-
ծարգոյ Թ. Մելիքեանի, որ Նաբօլիի տէրութեան զեւ-
պանատունին ծարգման է : Հոն կը գտնուի նաեւ իւր
գրատունը ուր ստորագրողը կը հրաւիրուին երթալ
և մեր հանդէսին վերաբերուած ամեն տեղեկութիւն-
ները տանուլ :

Համարատու Տըլէդր.

Ի ԲԱՐԻԶ, ԱՐԱՄԵԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆԵ.

Paris.— Typographie arménienne de Walder, rue Bonaparte 44.